

Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Բ. ՄԱՌ

ԿԱՅԾԸ ԼՈՅՍ Է ՏԱԼԻՍ

ԳԼ. Ե.

Կիրակի օրը, պատարագից յետոյ, պատարար Մէկսուէլը տուն էր վերադառնում, նրան իւր տան մօտ պատահեց Զոն Փոկսը: Չէր կարելի ճանաչել, որ նա առաջուայ «Մխտան» էր: Զոն Փոկսը սեւ մահուտէ նոր շորեր ունէր հագած, ոտներին՝ մաքուր փայլող կօշիկներ, գլխին՝ գեղեցիկ ծղօտեայ գլխարկ, մի ձեռքին ձեռնոց էր հագել, իսկ միւս ձեռքում խաղացնում էր ձեռնափայտը:

— Բարեւ ձեզ, պատահիր, — ողջունեց նա, վերցնելով գլխարկը: — Ես մի կարևոր գործի համար ձեզ էի սպասում: Չէր կարող արդեօք կէս ժամ միջոց նուիրել ինձ ձեր ժամանակից:

— Ամենայն ուրով, մանաւանդ որ վաղուց է, համարեա երեք շաբաթ է, որ ես չեմ տեսել ձեզ, Զոն: Ի՞նչ պէս էք: Դուք կատարեալ ֆրանս էք դարձել, կարծես պարերեկոյթ պիտի գնաք:

Զոն Փոկսը ինքնագոհ կերպով ժպտաց:

— Դիտմամբ եմ այդպէս արել, պարոն պատարար: Վերջին ժամանակներս լաւ աշխատանք ունէինք: Մեր տէրը մի կարևոր գործ է վերցրել, շատ շտապով գործ է և ես օրը չորս-հինգ ուրբաթ եմ ստանում: Առաջին անգամ ստացածս փողը ես ամբողջովին ծախսեցի միմիայն նրա համար, որ որչափ կարելի է լաւ հագնուեմ, և այժմ ամեն տօնին ամբողջ ժամերով ման եմ գալիս Ուզիդ Սն-

կիւնի այն գինեւաների մօտ, որտեղ առաջ ինձ ամենքը տեսել են որպէս մի խղճալի թափառաշրջիկ:

— Բայց այդ ինչի համար, — զարմացած ասաց Մէկսուէլ, Փոկսի հետ միասին տուն մտնելով:

— Որպէս զի ցոյց տամ իմ նախկին բարեկամներին, որ մարդ միշտ կարող է ոտի կանգնել, եթէ որ ուզենայ: Խօսքերով այդ դժուար է ապացուցել, իսկ այսպէս, այս ասելով Փոկսը նայեց իւր շորերին, ամենքին տեսանելի ու հասկանալի է առանց խօսքերի:

— Եւ ինչ, ազդե՞ւմ են ձեր շորերը, — հարցրեց Մէկսուէլ:

Ինչ ասեմ, — կմկմաց Փոկսը: — Հարբեցողներին միանգամից կտրել դժուար է, սակայն ես էլի կարծում եմ, որ թափառաշրջիկ Մխոտի այժմեան տեսքը գուցէ մի քանիսին գէթ մտածելու նիւթ տայ: Հէնց միմիայն իմ արտաքին փոփոխութիւնը իմ նախկին բարեկամների աչքին է զարնում, ստիպում է նրանց երկար խօսել ինձ հետ և ոմանց հրապուրում է: Ես արդէն երեքին գործի եմ դրել. յաճախ տեսնւում եմ նրանց շէտ և, ոչինչ, երեքն էլ պինդ են կանգնած իրենց տեղում: Բացի դրանից, իւրաքանչիւրը նրանցից իւր կողմից գործի է դրել էլի երկու երեք ծանօթների և մենք այժմ մի փոքրիկ խումբ ենք կազմել: Ես այնպիսի ծրագիր եմ կազմել, որ այդ մի հաստատուն ընկերութիւն դարձնեմ, որպէս զի դրա մէջ մասնակցողները կարիքի ժամանակ իրար օգնեն և որ գլխաւորն է վարձողների վստահութիւնը երաշխաւորեն: Հէնց այսքանի օրս, օրինակ, աշխատանոցի կառավարիչը, որ գիտէր մեր նորակազմ ընկերութեան մասին, ասաց ինձ.

— Ձան Փոկս, ինձ հարկաւոր է էլի երկու ատաղձագործ, Ձեր ընկերների մէջ ատաղձագործներ չկան արդեօք, ես սիրով նրանց կընդունէի և գործի կըդնէի:

Այդ վստահութիւնը ինձ համար շատ թանգ է և ես ցանկանում եմ ձեռք բերել այդ ոչ թէ մեր յիսուների չափ անդամների, այլ շատ ու շատ հազարների համար, որոնց

կողմից և այժմ ես դիմում եմ ձեր օգնութեանը, պարոն պաստոր:

— Խնդիրը ինչո՞ւմն է:

— Օգնեցէք մեզ, Մենք այժմ նման ենք նաւաբեկութիւնից յետոյ ամի ձգուածներին: Կանգնած ենք արդէն հաստատուն հողի վրայ, բայց դեռ երբեք չենք Մեզ նեցուկ է պէտք: Եկէք մեզ մօտ: Հէնց միայն ձեր այցելութիւնը շատ մեծ նշանակութիւն կունենայ: Դա բարոյական զօրեղ ազդեցութիւն կունենայ: Երբ ես նրանց խօսեցի ձեզ հրաւիրելու մասին, ամենքն էլ միաձայն կասկած յայտնեցին, թէ նա ինչպէս կը հաճի մեզ մօտ գալ:

Ձեր գալով՝ մենք մեզ աւելի վստահ կըզգանք: Մեր ձեռնարկութիւնը թէ մեր և թէ ուրիշների աչքում աւելի կը բարձրանայ:

— Ի՞նչ բանում կարող եմ ես ձեզ օգտակար լինել:

— Դիտէք ինչ է, պարոն պաստոր, Փարոսում ունեցած ձեր զրուցատրութիւնները դեռ բաւական չեն: Դուք այնտեղ կանչում էք նրանց դէպի լոյս, զարթեցնում էք քնից, այդ լաւ է: Բայց երբ մարդ զարթնում է՝ նրա գլուխն ու սիրտը սկսում են գործել, նրա մէջ ծագում են մտքեր, հարցեր, տարակուսանքներ: Լսելը դեռ քիչ է, երբեմն մարդ ինքը խօսել է ուղում: Ուստի և մենք ազատ ժամանակ հաւաքւում ենք խօսելու իրար հետ: Վարձել ենք շմի ինութիւն, ուր հաւաքւում ենք իրիկունները աշխատանքից յետոյ, կարդում ենք և ապա սրտանց խօսակցում:

Ի՞նչ էք կարգում:

— Առայժմ ամենից շատ Աւետարան ենք կարդում: Չարմանալի բան է, պարոն պաստոր: Մենք քրիստոնեայ ենք կոչւում, սակայն թէ ինչ է քրիստոնէութիւնը, Քրիստոսի վարդապետութիւնը, Աւետարանը, չգիտենք: Յաճախ ես իմ մտքումս ասում եմ, նախ քան միախոսենք ուղարկելը Եւպոնիա, Չինաստան, Հնդկաստան Աւետարան քաղրոելու, աւելի լաւ չէր լինի Աւետարանի քարոզիչներ ուղարկել քրիստոնէական մեծ քաղաքների փողոցները:

Չէ որ հէնց մենք ինքներս գեռ վայրենիներ ենք։ Մենք ահա վաթսուէն հոգի հաւաքուել ենք, սակայն մեզնից շատերը Աւետարանի մասին ոչ մի հասկացողութիւն չունին։ Անցեալ օրը մենք կարգում էինք աղքատ Ղազարոսի և մեծատան, ողորմած սամարացու և չար ծառայի առակը։ Մեզնից մէկը լսեց և վերջը ասաց.

— Անհնար է որ այդ բոլոր մեծ խօսքերը գրուած լինին այդ գրքում։ Այդպիսի սուրբ վարդապետութիւն ունենալով, ինչպէս է, որ մենք այսպիսի անասնական կեանք ենք վարում։ Ասում էք, շուտով երկու հազար տարի կը լինի, որ Աւետարանը քարոզւում է, հապա ինչո՞ւ դրանից մեր կեանքը չի ջերմանում։

— Նրա համար, ասում եմ, պատմում էր Փոկսը Մէկսուէլին, — որ բաւական չէ լոյս վառել, այլ պէտք է նրան տեսանելի դարձնել։ Եթէ վառած ճրագը թագցնենք ամանի տակ, սենեակում լոյս չի տալ։ Յիսուսը ճշմարտութեան լոյսը վաղուց վառել է երկրի վրայ, սակայն մենք նրան քիչ ենք տեսնելի դարձնում, դուրս չենք բերում մարդկանց առաջ։

— Ինչո՞ւ չեն դուրս բերում, — չէր հանդարտում հարցնողը։ — Այդպիսի խօսքերի մասին, որ մենք այժմ կարդացինք, պէտք է ամեն քայլափոխում, առանց լռելու, ազադակել։ Այն ինչ մեղմօտ խնջէ կատարւում։ Քառասուն երկու տարեկան եմ և առաջին անգամն եմ լսում այդ մասին։ Սակայն վաղուց պէտք էր, որ լսած լինէի։ Եթէ ես մանկութիւնից իմանայի այդ գիրքը, հաւանորէն այսպէս անասուն չէի լինիլ, ինչպէս որ այժմ եմ։ Ես առաջին անգամն եմ այսօր այստեղ դաճում և իմ այսօրեղ լսածներիցս քրտինք եկաւ վրաս։ Կարծես հարբած էի և յանկարծ զգաստացայ։

Նորա կողքին նստած էր 16—17 տարեկան մի պատանի։ Ընթերցումից յետոյ նա մօտեցաւ ինձ և ասաց.

— Թոյլ տուր որ հետո բերեմ այստեղ իմ մեծ քրոջը։ Թող նա ևս լսէ։ Ի՞նչ լաւ խօսքեր են. մարդիկ այդպէս չեն կարող խօսել։ Երեւում է, որ այդ Աստուծոյ

խօսքն է:

Աւետարանի ընթերցումից յետոյ, կենդանի խօսակցութիւն սկսուեց: Յիշում էին մեծատան ու Ղազարոսի առակը, համեմատում էին ներկայ կեանքը իսկական քրիստոնէական կեանքի հետ, դանդաղում էին կեանքի մէջ տիրող սոսկալի անարգարութեան և անիրաւութեան դէմ, դժգոհում էին իրենց ներկայ ծանր վիճակից: Առակի մեծատանը նմանեցնում էին իրենց անողորմ տէրերին, որոնց մօտ աշխատում են իրենք:

— Այդպիսի խօսքերը չէ որ լոկ դատարկաբանութիւններ չեն, — դարձաւ Ջոն Փոկսը Մէկսուէլին, — և մեր ժողովները շատ օգտակար կը լինէին, եթէ որ մի խելօք, և որ գլխաւորն է, սրտով լուսաւորուած ու աւետարանական ճշմարտութեամբ ջերմացած մարդ առաջնորդէր մեզ: Օրինակի համար հէնց դուք, պարոն պաստոր:

Մէկսուէլը համաձայնեց յաճախել նրանց ժողովարանը:

— Այդ դէպքում ես կը խնդրէի ձեզ հէնց այսօր ժամը հինգին, «Փարոսում» ունենալիք ձեր ժողովից յետոյ, — ասաց Ջոն Փոկսը: — Մենք ամենքս այնտեղ կը լինինք և այնտեղից կը գնանք մեր ժողովարանը, որը շատ մօտ է «Փարոսին»:

— Ներեցէք, պարոն պաստոր, — այս խօսքերով հանդիպեց Ջոն Փոկսը Մէկսուէլին բանուորների վարձած շինութեան մուտքի առաջ: — Մեր շինութիւնը այնքան էլ լաւ չէ, փոքր ինչ մութն է ու անմաքուր, սակայն մեզ համար յարմար է, անգը շատ է: Այսօր իմանալով որ դուք դալու էք, երկու հարիւրի չափ մարդ է հաւաքուել և փառք Աստուծոյ բոլորն էլ տեղաւորուել են,

Մէկսուէլը ներս մտաւ և շէմքի վրայ կանգ առաւ: Նրան այնպէս թուեցաւ, որ ընկել է հին քրիստոնեաների կատակոճքներից մէկի մէջ, որտեղ նրանք աղօթելու էին հաւաքուում: Նրա առաջ բացւում էր մի երկար ցած կամարակապ դահլիճ: Դահլիճի խորքում դիմացի պատի վրայ կախուած էր խաչելութեան պատկերը: Դահլիճի մուտքից

մինչև ծայրը երկարութեամբ դուռած էին երեք շարք սեղաններ և նստարաններ։ Ժողովականներից ոմանք նստած սեղանների մօտ թէյ էին խմում, իսկ միւսները ծառայում էին նրանց։ Սեղանների վրայ դուռած էին կտրտած սպիտակ հացի կոյտեր և մէջ ընդ մէջ ծաղիկների փունջեր։ Կային նաև մրգեղէնով լի ափսէներ։

— Մենք այստեղ թէյ ենք խմում և զրուցում, — բացատրում էր Ջոն Փոկսը Մէկսուէլին, — բոլորս միասին չենք կարող նստել, ուստի և հերթով ենք խմում։ Նախ նստում է մի կէսը և նրանց ծառայում են մնացածները. յետոյ նստում է երկրորդ կէսը և նրանց ծառայում են առաջինները։

— Ուրտեղից են այս ծաղիկներն ու մրգերը, — հարցրեց Մէկսուէլը։ — Ի՞նչ միջոցներով էք հայթհայթում թէյը, հացը։

— Ընդհանուրիս միջոցներով։ Այդ ամենը չնչին բան արժէ, սակայն զարդարում է մեր ժողովը։ Շինութեան համար վճարում ենք մենք՝ մշտական անդամներս, իսկ թէյի և միւս ծախսերի համար հաւաքում ենք ամենքից, թէ անդամներից և թէ հիւրերից, ներս՝ մտնելիս իւրաքանչիւրը տալիս է, ինչ որ կարող է, մէկը հինգ, միւսը եօթ, մի ուրիշը տասը կոպէկ։

— Եւ այդ բաւականանում է։

— Դեռ մի բան էլ մնում է։ Այդ մնացորդով մենք գրքեր ենք առնում մեր փոքրիկ մատենադարանի համար։

— Ո՞վ է կառավարում ձեր մատենադարանը։ — Ո՛չ որ։ Մենք չունինք գրքեր ստանալու և յանձնելու ցուցակներ։ Յետ դարձրած գրքերը ես սարքում եմ կրկին դարակների վրայ՝ վերնագիրը դէպի դուրսը, որպէս զի երևայ, թէ ինչ գիրք է։ Ես գիտմամբ այգալիսի կարգ սահմանեցի, ուզում էի փորձ անել և բարեխղճութեան մի փոքրիկ դաս տալ։ Առաջին անգամ գրքեր բաժանելիս ես ասացի նրանց։

— Բոլոր գրքերը ձեռք են բերուած ընկերների մէջ հաւաքուած դրամներով։ Յոյս ունիմ, որ մենք կարող կը-

լինինք անկորուստ պահել այդ կոպէկները: Գրքերը պիտի դրուին միմիայն ազնիւ խօսքի հիման վրայ: Ուղում եմ իմանալ, արդեօք մեր մէջ մի տասը կոպէկի ազնւութիւն գէթ չի գտնուիլ: Միթէ, հէնց որ մէկը առանց ցուցակում նշանակելու մի հինգ կամ տասը կոպէկանոց գիրք ուտանայ, իսկոյն և եթ պիտի գողանայ այդ գիրքը:

Երեք շաբաթուայ ընթացքում երկու հարիւրից աւելի գիրք էր դրուած և ոչ մէկը չկորաւ:

— Միայն դուք այն ասացէք, պարոն պատտոր, — գարձաւ Զոն Փոկսը Մէկուսէլին՝ առաջնորդելով նրան կողքի սենեակը, — թէ ինչո՞ւ կրօնական-բարոյական բովանդակութեամբ գրքերը մեծ մասամբ այնպէս ձանձալի ծանր են և կարգացում են առանց հետաքրքրութեան: Ձէ՞ որ նրանց մէջ խօսւում է կենքի ամենակարեւոր խնդիրներին՝ բարութեան, ճշմարտութեան Աստուծոյ մասին: Միթէ ամենահետաքրքրական և կենդանի հարցերի մասին չի կարելի աւելի կենդանի ու հետաքրքրական կերպով գրել:

— Դուք, սիրելի Զոն, ցաւօտ տեղի վրայ մատ գրիր. — ասաց Մէկուսէլը՝ նայելով ժամացոյցին և տեսնելով որ հինգին դեռ տասը ընդէ կայ: Ձեր յարուցած հարցերը, յիշուի հիմնական հարցեր են, որոնց մասին եղած դատողութիւնները պիտի արտայայտուին կենդանի և նոյն իսկ կրակօտ խօսքերով, որ կարող է նշել միմիայն կենդանի և ջերմ սրտերից:

Ես իմ կեանքիս մէջ շատ բազմատեսակ հրապարակական դասախօսութիւններ եմ լսել և նրանցից յատկապէս յիշում եմ երկուսը. մէկը ասորական դրամների մասին, միւսը՝ ծովի տլիքներին այս կամ այն գոյնը տուող ջրածինների (ինֆուզորիա) մասին: Ես ինչ գործ ունիմ սրանից երեք հազար տարի առաջ գործածուած ասորական դրամների հետ, կամ Հնդկաց օվկիանոսի տլիքներին փիրուզայի գոյն տուող ջրածինների հետ: Սակայն լարուած ուշադրութեամբ ես լսում էի երկու ժամ տևող դասախօսութիւնները: Ի՞նչն է այս հետաքրքրութեան պատճառը: Ինքը խօսողը, նրա սէրը գէպի իւր

դասախօսութեան նիւթը: Նա իւր սգեորութեան կրակով վառում էր և ինձ:

Ընդհակառակը, ինձ պատահել է լսել ճառեր,՝ ամեն տեղեւորանի հարցերի մասին և նրանք միմիայն մեռելային ձանձրոյթ են առաջադրել և ունկնդիրներին քնացրել:

Հէնց առաջին խօսքերից դուք զգում էք, որ այստեղ ճառում է ոչ թէ կենդանի խօսքը, այլ մեռեալ տառը: Դուք յիշում էք Աւետարանի խօսքը: «Ժողովուրդը դարմանում էր Յիսուսի ուսուցման վրայ, որովհետեւ նա խօսում էր, որպէս իշխանութիւն ունեցող, և ոչ թէ որպէս դպիրներն ու փարիսիցիները», և ասում էր ինքներդ ձեզ. «մեր առաջ կանգնած է մի դպիր»: Դպիրը խօսում է գրքից, այլ ոչ թէ Աստուծոյ կենդանի Հոգուց, նրա խօսքը չի վառուած Աստուծոյ կրակով և չի ջերմացնում լսողներին, այլ ընդհակառակը ջերմ սրտերն ևս պաղեցնել կարող է:

Ժամի հինգը խմեց, Մէկսուէլ դուրս եկաւ Ժողովականների առաջ:

— Աղօթենք, սիրելի բարեկամներ, ասաց նա: — Աղօթքը կըջերմացնէ և կօրհնէ մեր նոր ծանօթութիւնը և աւելի սերտ կերպով կըմիացնէ մեզ:

Ունկնդիրները հազուադէպ սգեորութեամբ մի քանի աղօթքներ երգեցին: Ընդհանուր երգեցողութիւնը բարձրացրեց Ժողովականների տրամագրութիւնը և աշխոյժ տուեց նրանց: Ամենքն էլ թարմացած նոտեցին իրենց տեղերում: Մէկսուէլին մի բաժակ թէյ առաջարկեցին և նա նստելով սեղանի մօտ՝ խաչելութեան պատկերի տակ, սկսեց խօսել: Նրա խօսքը նման չէր սովորական եկեղեցական քարոզի: Այդ, աւելի շատ, անկեղծ-կրօնական մարդու պարզ խորհրդածութիւն էր: Մէկսուէլը չէր ուսուցանում, նա զրուցում էր մօտիկ բարեկամների հետ, իւր տպաւորութիւններին հաղորդակից անելով նրանց:

— Անցեալները մի քանի օրով իմ լաւ ծանօթների կալուածքն էի դնացել, — սկսեց Մէկսուէլը: — Նրանք ու-

նին մի քանի հազար դեսեատին ընդարձակ հող։ Տնտեսութիւնը այնտեղ դուռած է շատ լաւ հիմքերի վրայ։ այնտեղ կան ահագին վարելահողեր, ջրազաղներ, տնասնունոցներ, հաւանոցներ և մեծ այգի։ Այդում մի քանի դեսեատին տուրածութեան վրայ շարքերով տնկուած են բազմաթիւ պտղատու ծառեր և թփեր։

— Ի՞նչ էք կարծում, մի այսպիսի այգի ճրքան եկամուտ կարող է տալ ինձ, — հարցրեց տանտիրուհին, ցոյց տալով ինձ իւր ընդարձակ այգին։

— Չգիտեմ, ճշմարիտ, — դժուարացայ պատասխանել ես, — երբէք առիթ չեմ ունեցել այդպիսի իրեր դնահատելու։ Սակայն կարծում եմ, որ մի այդպիսի այգու արդիւնքը պէտք է որ երկու-երեք հազար ուսուց պակաս չլինի։

— Այո, պէտք է որ մի քանի հազար արդիւնք բերի, — ասաց տխրութեամբ տանտիրուհին։ — Նախկին տարիները միշտ ինձ երեք-չորս հազար ուսուցի էին տալիս կապալառուները, իսկ այժմ առաջարկում են . . . հարիւր յիսուն ուսուցի, և այն էլ միայն նրա համար, որ այդու կապալը ձեռքից չտան յետագայում։ Փարնանը թոթուռ երեւեցաւ ծառերի վրայ և կերաւ բոլոր տերեւները։ Այգին այժմ համարեա ոչինչ չի տալիս, ծառերը շատ են, իսկ պտուղներ չկան։

— Երբ մարդ սաստիկ զբաղուած է մի որ և է բանով, — դարձաւ Մէկսուէլը ունկնդիրներին, — նա ինչ էլ որ տեսնի, լսի, կարդայ, միշտ այդ «մէկ բանի» մասին կը մտածի։ Ինձ համար այդ «մէկ բանը» յատկապէս վերջին ժամանակներս, մարդու, կեանքի մասին եղած մտածմունքն է, ինչպէս ենք ապրում մենք և ինչպէս պէտք է ապրենք։ Ուստի և տանտիրուհու խօսքերը իսկոյն իմ միտքս դարձրին գէպի մարդիկ և ես մտածմունքների մէջ ընկայ ու լռեցի։ Տանտիրուհին նկատեց իմ տրամադրութեան փոխուիլը և ասաց։

— Անհանգիստ մի լինիք։ Այգին մեր եկամտի գլխաւոր աղբիւրը չէ։ Այդ աւելի շուտ իմ մեծ որդու քմա-

հաճոյքի արդիւնքն է. նա սաստիկ սիրում է այգեգործութիւնը:

— Ես ձեր այգու մասին չէի մտածում, — ասացի ես, — իմ մտածմունքը այն այգու մասին էր, որ ոչ թէ մի հինգ, տասը դեսեատին տեղ, այլ ամբողջ երկրի երեսն է բռնում և որը կոչւում է մարդկութիւն: Ձէ որ այդ ևս այգի է, բայց ոչ մարդկանց, այլ Աստուծոյ այգի: Եւ երբ ես մտածում եմ այդ այգու մասին, պատկերանում է նա իմ առաջ վաղ դարնանը ամբողջը ծաղկի մէջ թաղուած. երբ ես յիշում եմ մանուկներին իրենց պայծառ աչերով և հոգով, ասում եմ ինքս ինձ. «որքան մեծ արդիւնք իրաւունք ունի սպասելու այգու տէրը: Բայց ահա դալիս է ամառը, հասնում է աշունը և հաղարների վոխարէն մի քանի ուրբիներ են ստացւում միմիայն: Բանից դուրս է դալիս, որ համարեա թէ ամբողջ այգին թրթուռը կերել է: Եւ այդ ոչ թէ միմիայն մի տարի, ինչպէս ձեր այգին է. այլ շարունակ, ամբողջ կեանքը, տարի տարու յետեից, ամբողջ դարեր: Դուք այս տարի վնաս կրեցիք, սակայն անցեալ տարիները լաւ արդիւնք էք ունեցել և հաւատացած էք, որ հետեեալ տարին դարձեալ մեծ արդիւնք կունենաք. Աստուծոյ այգին այդպէս չէ: Ինքներդ մտաբերեցէք և ուրիշներին հարցրէք. «արդեօք երկրի վրայ եղե՞լ է մի այնպիսի տարի, երբ Աստուծոյ այգին ամբողջապէս, և ոչ թէ միմիայն մի մասը, լիառատ արդիւնք տար»: —

Այս խօսակցութիւնը նստել է իմ գլխումս և շարունակ հետեւում է ինձ: Ուր էլ որ ես լինիմ այժմ, վերջին ժամանակներս, ում էլ որ տեսնեմ, ում հետ էլ խօսեմ, ինձ թւում է, որ ես այգու մէջ եմ, որ իմ շուրջս բոլորը պտղատու ծառեր են և որ ես ինքս էլ նրանցից մինն եմ: Ի՞նչ արդիւնք են տալիս նրանք Աստուծոյ այգու տիրոջը:

— Նայում եմ ես այժմ ձեզ վրայ, սիրելի բարեկամներ, շարունակեց Մէկսուէլը մի հայեացք ձգելով բոլորի վրայ, — և նոյնպէս կուզէի հարցնել. «իսկ մենք ինք-

ներս մեր տեղում պտուղ տուել ենք արդեօք, թէ մեզ
ևս վաղ դարնանը թրթուռը փչացրել է:

— Ի՞նչ պտուղ, ոչ մի պտուղ չենք տուել մենք, —
լսում էին ձայների զանազան կողմերից, — փուշ և տա-
տասկ ենք տուել մենք: Մենք այգի չենք, այլ խոտան
անապատ:

— Թող այդպէս լինի, — համաձայնեց Մէկսուէլը նրանց
հետ: Ասենք թէ մեր այգին անապատ է դարձել, սակայն
անապատը կարելի է մաքրել և կրկին այգի դարձնել:
Կարիքից ստիպուած, ճանապարհորդները անցնում են
նոյն իսկ անանցանելի անտառներով, ճանապարհ են բաց
անում խիտ թաւուտների միջից: Փորձենք մենք ևս այդ-
պէս անել: Անտառի թաւուտը մի մեծ անյաղթելի ար-
գելք չէ: Պէտք է կտրտել այդ անտառը, ճանապարհներ
բանալ: Ինձ այնպէս է թւում, որ մենք այստեղ արդէն
կանգնած ենք այդ գործի սկզբում: Նախաձեռնութիւնը
պատկանում է մեր ընդհանուր բարեկամ Ջոն Փոկսին:
Գնացէք նրա յետևից: Դուք հաւաքուած էք այստեղ
այլ և այլ գործարաններից և աշխատանոցներից, Իւրա-
քանչիւրդ ձեր տեղում Ջոն Փոկս եղէք: Բաւական է
ինչքան մնացիք անտառի մթութեան մէջ:

Փրկիչը Մատթէոսի աւետարանի տառերորդ գլխում
ասում է. «Մի կարծէք թէ եկայ խաղաղութիւն ձգելու
երկրի վրայ. չեկայ խաղաղութիւն ձգելու, այլ սուր:»
Մենք աւելի քան ընտելացել ենք անտառի խոնաւութեանն
ու նեխուածութեանը և հաշտուել ենք նրա հետ: Փրկիչը
հակառակ է այդ անտառի նեխուածութեան հետ ունե-
ցած մեր հաշտութեանը. նա բերաւ իւր սուրը, իւր վար-
դապետութիւնը, Աստուծոյ արքայութեան կոչի խօսքը,
որ սրի պէս խրուում է մարդու սիրտը և անարդարու-
թեան թաւուտի միջից ճանապարհ բաց անում, վեր
առէք այդ սուրը: Գնացէք այդ սրով Ջոն Փոկսի յետևից
դէպի գործ, մաքրեցէք անտառը, ճանապարհներ բաց
արէք, կտրտեցէք որբան կտրելի է լայն և անգաղար մի
խնայէք ձեր բազուկները և քրտնելուց մի վախեցէք:

Մէկսուէլի խօսքերը ողի որեցին ժողովականներին։ Ամենքն էլ կարծեա թէ աւելի անոյգ, ամուր և ուժեղ էին զգում իրենց։ Նրանք գործի էին փափաղում և այնպիսի գործի, որի մասին խօսել էր Մէկսուէլը։

Ժողովականներից մէկը ցաւ յայտնեց, թէ ինչու շատերը այդպէս չեն մտածում և գործում։ Թէ ինչու միլիոնաւոր մարդիկ ապրում են առանց որ և է օգուտ տալու ուրիշներին։

Այդ մասին,—պատասխանեց Մէկսուէլը,—Աւետարանի մէջ շատ զօրեղ խօսք կայ ասուած, «մի դատէք, որ չդատուիր»։ Մենք ուրիշներին դատաւոր լինել չենք կարող։ Մենք կարող ենք արտով ցաւել, բայց ոչ թէ ուրիշներին մեղադրել։ Մենք կոչուած ենք աշխարհ Աստուծոյ գործի համար։ Մեր պարտքն է աշխատել և ոչ թէ դատել։ Որքան շատ է մեր շուրջը անկարգութիւնը, այնքան աւելի քիչ ժամանակ պիտի ունենանք դժգոհութեան ու ու տրտունջի համար և այնքան աւելի եռանդով գործի պիտի կաշենք այդ անկարգութիւնները վերացնելու համար։

Վերջացնելով խօսքս, ասաց Մէկսուէլը, դառնալով դէպի ժողովականները.—ես կաւեղացնէի այստեղ Յիսուսի ասածը իւր աշակերտներին. «Հօւնձը շատ է, իսկ մշակները քիչ։ Ազաշեցէք հնձի Տիրովը, որ մշակներ ուղարկէ իւր հնձի համար»։

Ռուս. թարգմ. Մամբրէ վարդապետ.

Վ. Երզ